Չորեքշաբթի
10 հունվարի 2024թ.
№ 1 (610)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
9 771829 346006 24001 >

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Մեզ համար երբեք անցյալ չի դառնալու Արցախը

Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:
«Հիմա լոյս էք ի Տեր. ընթացեք ինչպես լուսո որդիներ. քանզի լուսո պտուղներն են բարությունը, արդարությունը և ճշմարտությունը» (Եփ. 5.8-9):



Սիրելի հավատավոր ժողովուրդ,

Այսօր՝ Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնին, ազգս հայոց, թեև վշտակիր և հոգեխռով, սակայն հավատքով աներեր, կամքով անկոտրում և հույսով առլեցուն, խոնարհվում է մանկացյալ Փրկչի առջև, որ բեթղեհեմյան այրից որպես լույս ու փրկություն ճառագեց ողջ աշխարհին: Գեղեցիկ օրհներգությամբ է հոգեպարար շարականը մեզ փոխանցում Սուրբ Ծննդյան հիասքանչ իրողությունը. *«Աստվածածին, լույսի խորան, արդարության Արեգակի արևելք եղար և խավարի մեջ նստածներիս լույս ծագեցրիր»:* Փրկչի Ծնունդը հրավեր է խավարից դեպի լույս, դեպի Աստված ընթանալու և միշտ Տիրոջ հետ լինելով՝ արժանի դառնալու երկնատուր բարիքների ու հավիտենության: Մարդեղացյալ Աստվածորդուն մերժելը, սակայն, արհավիրքներ է բերում, չարիք ու ավեր սփռում: Սուրբ Ծնունդը այսօր քրիստոնյա ողջ աշխարհը տոնում է աղոթքով ու հայցով, որ մարդկության կյանքը լցվի Քրիստոսով նորոգությամբ, և ազգեր ու պետություններ կարողանան գտնել խաղաղության ու համերաշխ համակեցության ուղիները տագնապներով ու հակամարտություններով լեցուն ներկա աշխարհում:

Մեր ժողովուրդը 21-րդ դարում վերստին կրեց կորուստներ, ենթարկվեց նոր փորձություններ, որոնք, ցավոք, անկարող եղանք հաղթահարելու աշխարհաքաղաքական բարդ իրադարձությունների, ինչպես նաև առաքելապատվեր բարության, արդարության ու ճշմարտության ճանապարհից խոտորվելու պատճառով: Բարությունը մեզանում աղճատվեց չարության ու նենգության որոմներով, արդարությունն այլափոխվեց կողմնակալության ու հաշվեհարդարի դրսևորումներով, ճշմարտությունը խեղվեց ու խաթարվեց ստով ու չարահնար գործողություններով: Նման արատ-

Շարունակությունը՝ էջ 3

Ավարտված 2023-ին Սյունիքի անդամահատումը շարունակվեց. վերջին բռնազավթումը Տեղ գյուղի տարածքից էր

Ավելի վաղ թուրք-ազերիները զավթել էին Շուռնուխի արեւելյան հատվածը, Մ-2 մայրուղու Գորիս-Կապան ճանապարհահատվածը, Մեծ Իշխանասարն ու Գլուխ Ձագեձորոն, Սեւ լճի արեւելյան հատվածը, Մեծ Իշխանասարի հարավարեւմտյան սարալանջերը, Ներքին Հանդի մերձակա բարձունքներն ու անգամ գյուղի գերեզմանատունը, եկեղեցին եւ խմելու ջրի աղբյուրները, Գորայքի ամառային արոտավայրերի հյուսիսային հատվածը, Կապան-Ճակատեն, Կապան- Եղվարդի ենթաշրջանի ճանապարհները...

Եվ, իհարկե, զոհեր զինծառայողներից՝ սահմանի վրա, պատանդառություններ սահմանից:

Սյունիքը, որ դարեր շարունակ մեկ մարմին է եղել Արցախի հետ, տարակուսելի պահվածք դրսեւորեց հայոց այդ երկրամասի լիակատար շրջափակման եւ սովի մատնվելու օրերին՝ խոհանոցային փառատոներ, քեֆ-ուրախություններ...

Սյունիքի այսպես կոչված մտավորականությունն ու այսպես կոչված իշխանական վերնախավը գերեզմանային լռությամբ հետեւեցին Արցախի ողբերգությանը, արցախահայության ցեղասպանությանը... Եվ դա գնահատվեց իբրեւ «համերաշխության եւ միասնության» վերականգնում Սյունիքի մարզում:

Աշխարհի բոլոր ուժային կենտրոններում Զանգեզուրի միջանցք հորինվածքի շուրջ քննարկումներ, «բնիկ» ադրբեջանցիներին «իրենց հայրենի» Արեւմտյան Զանգեզուր վերադարձնելու ցնդաբանություն եւ, իհարկե, Սյունիքի հավաքական կարծիքի (դիրքորոշման) լիակատար բացակայություն իր իսկ ճակատագրին առնչվող այդ հարցերի հանդեպ:

Փոխարենը՝ Սյունիքին պատվաստված կամ Սյունիքի վրա թառած ինչ-որ խմբակի հրճվանք, դեռևս կենդանության օրոք մահացած ինչ-որ արարածների, դեկորատիվ գործիչների պարգեւատրումներ, պարգեւավճարներ...

Ահա այդպիսի «համերաշխությամբ ու միասնությամբ», այդպիսի «նվաճումներով» եւ «հայրենիքին» մատուցած այդպիսի ծառայություններով էլ Սյունիքը հրաժեշտ է տվեց 2023 թվականին...

Ուժն է ծնում իրավունքը: Ուժեղինն է աշխարհը, հայրենիքը, ազատությունը և ամեն ինչ: Ուզո՞ւմ ես վերջ տալ գերմարդկային տառապանքիդ: Ուզո՞ւմ ես փրկվել: Եղի՛ր ուժեղ, քանզի թույլերը բարեկամ չունեն աշխարհում: Մեզ պետք եղած ուժը փնտրենք մեր մեջ:

Գարեգին Նժդեհ

Լուրեր

Իրանի Իսլամական Հանրապետության Թավրիզ քաղաքում նախատեսվում է Հայաստանի գլխավոր հյուպատոսություն հիմնել:

Այդ մասին Իրանի Իսլամական Հանրապետության ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը նշեց ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ:

Ավարտվել են Տեղ գյուղի Սբ Գևորգ եկեղեցու վերականգնման, տարածքի բարեկարգման աշխատանքները:

Սբ Գևորգ եկեղեցին գտնվում է Տեղ գյուղի կենտրոնում և իր ուրույն տեղն է զբաղեցնում Հայաստանի Հանրապետության վաղմիջնադարյան միանավ բազիլիկների շարքում:

Ավարտվել են Շուռնուխ բնակավայրում կառուցվող նոր թաղամասի բնակելի 13 տների և անասնագոմերի շինարարական աշխատանքները:

Հայտնի չէ, թե կոնկրետ երբ բնակիչները կկարողանան տեղափոխվել իրենց նոր տները: Բացի այդ, ջրամատակարարման նոր համակարգը չի կարողանա բավարարել թաղամասի խմելու ջրի կարիքները (այդ թվում՝ գյուղի ջրամատակարարումն ամբողջությամբ): Նոր թաղամասի շինարարության ժամկետը հինգ անգամ հետաձգվել է:

Արցախից բռնի տեղահանված երկու ընտանիք Գորիսում նորակառույց բնակարաններ ստացան,

որոնք ամբողջովին կահավորված են անհրաժեշտ իրերով, կենցաղային տեխնիկայով: Բնակարանների վերակառուցման աշխատանքները մեկնարկել էին երկու ամիս առաջ՝ Գորիս համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ և ամերիկահայ բարերարների աջակցությամբ: Երիտասարդներն իրենց ավագ ընկերների հետ գումար էին հավաքել և որոշել օժանդակել արցախահայերին: Ամերիկահայ երիտասարդներ Գարեն Բաբախանն ու Զարեհ Թումանյանն այցելել են Գորիս, գնել անհրաժեշտ շինանյութը և անձամբ մասնակցել շինաշխատանքներին: Նախաձեռնությանն օժանդակել է «Վիննեթ Գորիս» զարգացման հիմնադրամը: Բնակարանների վերակառուցման աշխատանքներն ամբողջովին իրականացվել են Գորիսի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Գորիս բարեկարգում» ՀՈԱԿ-ի միջոցով: Ներկերի տրամադրման հարցում օժանդակել է «Հայաս Ֆինլանդիա» ընկերության հիմնադիր Աբգար Մարգարյանը: Իսկ բնակարանների ամբողջ կահավորման աշխատանքներն իրականացվել են բարերարներ Ռուբեն Հարությունյանի, Սերգեյ Սարկիսովի և Արման Ղուկասյանի աջակցությամբ: Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանն ընտանիքներին հանձնելով բանալիները՝ նշել է, որ ընդամենը 15 օրից ևս մեկ բնակարանաշինության խոշոր ծրագիր է մեկնարկելու, այս անգամ՝ 19 ընտանիքի համար:

«Տարվա լավագույն պետական գործիչը Սյունիքում». Գևորգ Փարսյան և Դավիթ Դանիելյան

Հաջողակ հետաքրքիր ընթացք ունեցավ «Սյունյաց երկիր» կողմից դեկտեմբերի 28-ին և 29-ին Սյունիքի մարզում անցկացված հարցախույզը՝ **ո՞վ կամ ովքե՞ր են մեր երկրամասի լավագույն պետական գործիչները 2023 թ. արդյունքներով:**

Մինչ հարցախույզի արդյունքներին անդրադառնալը՝ խմբագրական մի գաղտնիք բացահայտենք. շատերին հետաքրքրող այդ հարցի պատասխանը սկզբնապես փորձեցինք պարզել հեռախոսային հարցման միջոցով: Պարզեցինք և որոշակի արդյունքներ ունեցանք, սակայն... Խմբագրական մեր խորհուրդը տարակույս հայտնեց, թե ստացված արդյունքները կարող են հավաստիություն չներշնչել և նույնիսկ խոցելի լինել, քանզի միջոցառման իրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովված չեն եղել: Ուստի և ստացված արդյունքներն առ ոչինչ համարվեցին, ու նախընտրեցինք հրապարակային և թափանցիկ գործելակերպ՝ մասնակիցների անունները նշելու պայմանով, նկատի ունենալով, որ այդ դեպքում արդյունքների չափելիությունը ստույգ և տեսանելի հիմքեր կունենա:

Կարևորեցինք նաև հարցախույզի մասնակիցների կողմից մատնանշված անձանց վերաբերյալ տարվա ընթացքում հայտնված կարծիքները, գնահատականները:

Իսկ այժմ՝ դեկտեմբերի 28-29-ին անցկացված հարցախույզի արդյունքների մասին:

Հարցախույզ անցկացնելու մեր հրապարակումը մեկուկես օրվա ընթացքում (դեկտեմբերի 30-ի ժամը 10:00-ի դրությամբ) ունեցավ մոտ 36 հազար ընթերցող:

Ցավոք, ընթերցողների և նույնիսկ հավանություն տվողների մի մասը կոնկրետ անձանց վերաբերյալ առաջարկություն չներկայացրեց, ինչը մեկ անգամ ևս վկայում է մեր հանրությանը հասկած անտարբերության մասին:

Արձագանքները (ինչպես և հայտարարել էինք նախապես) ընդունում էինք syuniacyerkir.am կայքի Syuniacyerkir Newspaper ֆեյսբուքյան էջի քոմմենթների (մեկնաբանությունների) բաժնում, syuniacyerkir@mail.ru էլեկտրոնային էջում, նշված ֆեյսբուքյան էջի անձնական բաժնում:

Բոլոր այն կարծիքները, որոնց հեղինակները նշված չէին, անվավեր ճանաչվեցին: Անվավեր ճանաչվեցին այն հետևորդների կարծիքները, ովքեր սյունիքաբնակ չեն: Չեն հաշվարկվել այն անձանց հավանություները, որոնք դրված են հարցախույզին մասնակցած մարդկանց մեկնաբանությունների տակ, որովհետև միեւնույն անձը (շատ դեպքերում) հավանություն է տվել մի քանի մեկնաբանության:

Նպատակահարմար գտնվեց հարցախույզի արդյունքներն արտացոլող փաստական հիմքերը որոշ ժամանակ պահպանել խմբագրությունում. ցանկացողները կարող են ծանոթանալ:

Բոլոր այդ սկզբունքները հաշվի առնելով՝ այսպիսի պատկեր ստացանք. կարծիքների գերակշիռ մասը հօգուտ Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի էր (հարցախույզի մասնակիցների 62,1 տոկոսը) և ՀՀ Ազգային ժողովի սյունեցի պատգամավոր Դավիթ Դանիելյանի (հարցախույզի մասնակիցների 30,8 տոկոսը):

Մենք ընդհանրացրել և ամփոփել ենք նաև կարծիքների բովանդակությունը՝ ինչո՞ւ հենց նրանց:

Գևորգ Փարսյանի գործունեությունն այսպես արժևորվեց-իմաստավորվեց. հավատարմություն նախընտրական խոստումներին, համայնքի բնակիչների հոգսերին ու մտահոգություններին մշտապես հաղորդակից լինելու հետևողականություն, օրավուր փոփոխվող և գեղեցկացող Կապան, նախօրինակը չուսեցող մշակութային միջավայրի ստեղծում և մշակութային միջոցառումներ՝ նույնիսկ միջազգային մասշտաբի, Սյունիքի պատմության հերոսական դրվագներով և նշանավոր սյունեցիների օրինակով ազող սերնդին դաստիարակելու վճռականություն, Սյունիքի առջև ծառացած հիմնախնդիրների շուրջ քննարկումներին գիտական հանրության և ստեղծագործող մտավորականության ընդգրկում (հատկապես նշվեց հայ-իրանական միջազգային գիտաժողովը), արտաքին աշխարհի հետ կապերի ամրապնդում (Իրանի Իսլամական Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, ԱՄՆ) և այդկերպ Սյունիքի հիմնախնդիրների վրա ուշադրության հրավիրում, վերջին 40-50 տարում առաջին անգամ, նախադպրոցական հաստատության շենքի կառուցում... Եվ, իհարկե, բոլոր առիթներով ու բոլոր հարթակներում Կապանն ու Սյունիքը արժանապատվորեն ներկայացնելու կարողություն:

Դավիթ Դանիելյանի գործունեությունն էլ այսպես իմաստավորվեց և արժևորվեց... Նրան, ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները, ճանաչում, հետևում և գնահատում են մարզի բոլոր տարածաշրջաններում: Պարզվում է նաև՝ նրան դիմում են ոչ միայն Կապանի, այլև Մեղրու, Գորիսի, Սիսիանի, Քաջարանի բնակիչները: Կարևորվել է հանգամանքը, որ իր կտավներով կարողացել է տարվա ընթացքում մի քանի անգամ Սյունիքը և ընդհանրապես Հայաստանը հավուր պատշաճի ներկայացնել միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներում: Գնահատվել են նրա անմիջականությունն ու հասանելիությունը, խոսքի և գործի միջև հակասության բացակայությունը, բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների հանդեպ ուշադրությունը, Սյունիքի հիմնախնդիրները ժամանակ առ ժամանակ ԱԺ-ում բարձրացնելու հետևողականությունը, սեփական կարծիք ունենալու և արտահայտելու քաջությունը, սահմանապահ գյուղերի բնակիչների հետ պարբերական շփումները և մարդկանց մտահոգություններ-ը գործադիր իշխանության տարբեր օղակներ ներկայացնելու գործելակերպը:

Ամփոփելով արտահայտված կարծիքները (և՛ քանակով, և՛ բովանդակությամբ) «Սյունյաց երկիր» բազմահազարանոց լսարանը Սյունիքի մարզի 2023 թվականի լավագույն պետական գործիչներ է հռչակում Կապան համայնքի ղեկավար Գևորգ Ռազմիկի Փարսյանին և ՀՀ Ազգային ժողովի սյունեցի պատգամավոր Դավիթ Հրանտի Դանիելյանին:

Հարցախույզի բազմաթիվ մասնակիցներ (7,1 տոկոսը) Սյունիքի մարզի տարվա պետական գործիչներ են համարել Գորիս, Մեղրի, Քաջարան համայնքների ղեկավարներ Առուշ Առուշանյանին, Բագրատ Շաքարյանին, Մանվել Փարամազյանին, Սյունիքի մարզպետարանի աշխատակից Գրիշա Խաչատրյանին, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանին և մի քանի այլ անձանց:

* * *

«Սյունյաց երկիր» խմբագրակազմը շնորհավորում է Գևորգ Փարսյանին և Դավիթ Դանիելյանին՝ Սյունիքի բնակիչների բարձր գնահատականին ու վստահությանն արժանանալու կապակցությամբ:

Հավատում ենք՝ այսուհետ ևս նրանք կշարունակեն նվիրական ծառայությունը Սյունյաց աշխարհին, որ ներկայումս հայտնվել է ներքին ու արտաքին բազմաթիվ մարտահրավերների հորձանուտում: //

Տարեմուտի սառը ցնցուղ՝ մեղրեցիների գլխին

Անբացատրելի հանգամանքներում՝ մի քանի տարվա տարբերությամբ, Մեղրի համայնքում փակվել և փակվում են հանրապետական, մարզային ենթակայության հիմնարկներ՝ հարկային տեսչություն, կադաստր... Հերթականը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարանի Մեղրու նստավայրի փակման մասին իրազեկումն է, որը, որպես «Ամանորի նվեր», մատուցվեց բնակչությանն ու դատարանի աշխատակազմին...

Ընդամենը 12 տարի առաջ կառուցված դատարանի տիպային շենքը սկզբնական շրջանում իր գործառնական նշանակությամբ թեթևացրել էր հեռավոր մեր տարածաշրջանում բնակվող՝ իրավական խնդիրների հետ առնչություններ ունեցող մարդկանց հոգսերը:

Որոշ ժամանակ դատավոր չունեցած դատարանում վերջապես դատավորներ նշանակվեցին, բայց նրանք, չգիտես ինչու, գերադասում էին իրենց նստավայրն ավելի շատ դարձնել մարզկենտրոնը, և միայն սակավաթիվ կիստեր հրավիրվեցին Մեղրիում:

Մեկ-երկու տարվա ընթացքում կրճատվեց դատարանի 3-4 հաստիք, մարզկենտրոն

տեղափոխվեցին համակարգիչները, գոյքը՝ կարծես հող նախապատրաստելով այսօրվա կազմաբանման համար:

Դատարանի նստավայրը փակվելու դեպքում՝ Կապանի նստավայր ներկայանալիս, մեղրեցի հայցվորները, վկաները, դատավարության մյուս մասնակիցները (տարեց, հիվանդ) պետք է հաղթահարեն 80 կմ ճանապարհային, տրանսպորտային, կեցության անհարմարություններ, ֆինանսական դժվարություններ...

Այնպես որ՝ մի հիմնարկ էլ փակվեց Մեղրիում, մի խոչընդոտ էլ դրվեց մեղրեցիների առջև...

Հարց է առաջանում՝ ինչո՞ւ են ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը նման որոշում կայացրել, ինչո՞ւ հաշվի չեն առել Մեղրիի աշխարհագրական դիրքը, առանձնահատկությունները:

Մի՞թե պարզ չէ՝ Մեղրին այն տարածաշրջանն է, որի նկատմամբ պետական մոտեցումը պետք է լինի տարբերակված, մինչդեռ...

Ժամանակին երջանկահիշատակ Կարեն Դեմիրճյանն ասել է. *«Մեղրիի համար միշտ պետք է լինի կանաչ ճանապարհ, պետք է թեթեւացվեն Մեղրեցու հոգսերը, որ մարդիկ բնակավայրից չհեռանան, որովհետեւ հեռացողն այլեւս չի վերադառնալու, իսկ այս հողն անգնահատելի է»:*

Ասել, գործել ու բոլորից պահանջել է նման մոտեցում: Իսկ հիմա, երբ հայտնի իրադարձությունների ու անորոշությունների պատճառով Մեղրին առավել կարևորվել է, դարձել ռիսկային, դարձել կռվախնձոր աշխարհի ուժեղների եւ հատկապես թուրքական աշխարհի համար, անհրաժեշտ է նրան ավելի անխոցելի դարձնել, հզորացնել: Իսկ Մեղրին ամուր ու պաշտպանված կարող է լինել միայն այստեղ բնակվող մարդկանցով:

Մինչդեռ նման որոշումները խաթարում են մեղրեցու հավատը, կորցնում վաղվա օրվա հանդեպ ունեցած հույսը:

Հանրապետության այլ բնակավայրերի դատարաններում աշխատելու առաջարկները, թվում է, կլուծեն Մեղրիի դատարանից ազատվողների հետագա զբաղվածության հարցը, բայց միայն թվում է: Ամենակարևորը՝ հաշվի չի առնվում, որ Մեղրիից հեռանալու են ոչ միայն աշխատանք փնտրող զինվագարտ երիտասարդները, այլև նրանց ընտանիքները, երեխաները:

Արդյո՞ք այսպիսի տրամաբանությամբ կամ մոտեցմամբ ամրապնդվելու է Մեղրին:

Հարկ եմ համարում նշել նաեւ, որ դրսում նրանց ստացած 100-150 հազար դրամ աշխատավարձը չի բավականացնելու նոսկիսկ Երևանում, Սիսիանում կամ Կապանում բնակարանի վարձը վճարելուն:

Ստահոգաբար հարց է առաջանում՝ արդյո՞ք Մեղրիի նստավայրի 9 հոգու համար տրամադրվող միջոցներն այդքան լրջորեն են ազդում համակարգի եւ պետբյուջեի վրա, որ նրա փակելը դարձել է առաջնային խնդիր: Կամ մի՞թե Մեղրին այնքան ռիսկային է ու ոչ բարեհամար, որ մեր հարգարժան դատավորները չեն ուզում աշխատել Մեղրիում:

Մարդիկ նաեւ այլ ենթադրություններ ունեն՝ իսկ գուցե նախատեսվել է Մեղրիի նորակառույցներից վեհաշուքը՝ դատարանի շենքը, ծառայեցնել մեկ այլ նպատակի կամ նվիրել որեւէ մեկին...

Ուզում եմ հավատալ, որ համապատասխան մարմինները լրջորեն կխորհեն որոշման վերանայման ուղղությամբ, Մեղրեցիներին չեն պատճառի անհարկի դժվարություններ:

Հակառակ դեպքում մեր հիմնարկը, փաստարկված պարզաբանում ենք պահանջում Մեղրիում իրականացվող վերոնշյալ անեթեթ բայլերի վերաբերյալ:

ՍԻՐՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ
22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ.

ՀՊՄԿ-ն հրապարակեց կայուն զարգացման հերթական հաշվետվությունը, որում ներառված են շահագրգիռ կողմերին հետաքրքրող բոլոր ցուցանիշները

Հանգեցուցի պղնձամոլիբդենային կոմբինատը ներկայացրեց իր կայուն զարգացման հերթական հաշվետվությունը և TCFD (կլիմայի հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խմբի) ուղեցույցով պատրաստված առաջին հետազոտությունը: Երկու հաշվետվություններն ամփոփում են նախորդ՝ 2022 թվականը, բայց նաև պարունակում են 2023-ի, ինչպես նաև առաջիկա տարիների թիրախների և անելիքների մասին տեղեկատվություն:

Այդ առիթով կազմակերպված աշխատաժողովին մասնակցում էին հանքարդյունաբերական ոլորտի մասնագետներ, հասարակական կազմակերպությունների, պետական գերատեսչությունների ներկայացուցիչներ, հյուրեր դեսպանատներից և միջազգային կառույցներից:

ՀՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին ողջույնի խոսքում նշեց. *«Մենք վստահ ենք, որ բոլոր շահագրգիռ կողմերի համար փոխշահավետ զարգացման և հայաստանի տնտեսական առաջընթացում առավելագույն ներդրում ունենալու ճանապարհը մեր գործունեության բոլոր ոլորտներում պատասխանատու մոտեցման ներդրումն է: Այս տարի ես հատկապես հպարտ եմ, որ մենք հրապարակում ենք ոչ միայն կայուն զարգացման հաշվետվությունը, այլև իրականացնում ենք ոլորտի առաջին ուսումնասիրությունը՝ Հայաստանում TCDF-ի ուղեցույցի հիման վրա: Այս զեկույցը ներառում է ոչ միայն մեր ձեռքբերումները, այլև բացթողումները, և սա իրական հաշվետվողականության ապացույցն է: Կայուն զարգացումը վերջնակետ չէ, այլ բարդ աշխատանք և մշտական ճանապարհ, որը մենք անցնում ենք ամեն օր»:*

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյանն անդրադարձավ Կայուն զարգացման զեկույցի հրապարակման կարևորությանը, նշելով, որ դա պատասխանատու գործելաոճ է. *«Ուրախալի է, որ այս աշխատածի առաջատարտիկներից ՀՊՄԿ-ն է, որը որպես խոշորագույն հանքարդյունաբերական ընկերություն՝ իր գործունեությամբ, դառնում է չափանիշ և նոր նշաձող է սահմանում ամբողջ հանքարդյունաբերական ոլորտի համար»:*

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների փոխնախարար Հովհաննես Հարությունյանը ողջույնի խոսքում նշեց, որ կառավարությունը հետևողական է լիովին լավագույն չափանիշների ներդրման հարցում, և ուրախալի է տեսնել, որ ընկերությունը սեփական նախաձեռնությամբ է ներդնում այդ գործելաոճը:

Միջոցառման ընթացքում անցկացվեցին երկու պանելային քննարկումներ, որոնց մասնակցեցին ՀՊՄԿ և ոլորտի այլ ներկայացուցիչներ, խորհրդատվական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ:

Ելույթ ունեցավ նաև գիտաժողովի հատուկ հյուր, հակամարտությունների կարգավորման, սոցիալական կառավարման և կայուն զարգացման միջազգային փորձագետ դոկտոր Ջոն Հարկերը:

Միջոցառման ավարտին Տնտեսական լրագրողների ակումբը և հանքագործների ու մետալուրգների միությունն ամփոփեցին հանքարդյունաբերության ոլորտի տարվա լավագույն հրապարակումների մրցույթի արդյունքները՝ պարգևատրելով լավագույն հրապարակումների և տեսանյութերի հեղինակներին:

ԵՐԵՎԱՆ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 Թ.



Իրանի Իսլամական Հանրապետությունում եռօրյա սուգ էր. «Սյունյաց երկրի» ներկայացուցիչներն այցելել էին ԻԻՀ Կապանի գլխավոր հյուպատոսարան

Հունվարի 4-ի առավոտվանից բազմաթիվ կապանցիներ այցելում էին Իրանի Իսլամական Հանրապետության Կապանի գլխավոր հյուպատոսարան՝ հարգանքի տուրք մատուցելու Քերման քաղաքի գերեզմանատան մոտ տեղի ունեցած պայթյունների հետևանքով զոհվածների հիշատակին:

Ողբերգական միջադեպը տեղի էր ունեցել հունվարի 3-ին՝ գեներալ Ղասեմ Սոլեյմանիի նահատակության հերթական տարելիցին նվիրված միջոցառման ժամանակ:

Երկու պայթյունի հետևանքով զոհվել է առնվազն 103 մարդ, վիրավորվել 171-ը:

Իրանի Իսլամական Հանրապետության իշխանությունները տեղի ունեցածը որակել են ահաբեկչություն:

Կատարված ահաբեկչության պատասխանատվությունը ստանձնել է «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորումը:

Իրանի կառավարությունը եռօրյա սուգ էր հայտարարել ամբողջ երկրում:

Հունվարի 5-ին «Սյունյաց երկիր» թերթի և «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի խմբագրության ներկայացուցիչներն այցելել են Իրանի Իսլամական Հանրապետության Կապանի գլխավոր հյուպատոսարան:

Սամվել Այեբասյանը խմբագրակազմի և նշված պարբերականների բազմահազարանոց լսարանի անունից ցավակցություն հայտնեց գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինի և հյուպատոսարանի ամբողջ աշխատակազմին, ի դեմս նրանց՝ Իրանի եղբայրական ժողովրդին ու մասնավորապես զոհվածների հարազատներին՝ մաղթելով համբերություն և տոկունություն:

Հանդիպման ընթացքում գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին տեղեկություններ հաղորդեց ահաբեկչության և դրա հետևանքների վերացման ուղղությամբ Իրանի Իսլամական Հանրապետությունում իրականացվող քայլերի մասին:

Գլխավոր հյուպատոսը սրտաբուխ երախտագիտություն հայտնեց կապանցիներին և Սյունիքի ողջ բնակչությանը՝ դժբախտության այս օրերին իրենց կողքին լինելու, իրենց մխիթարելու և սատարելու, ինչպես և Իրանի ժողովրդին պատուհասած սուգն ու վիշտը փարատելու համար: //

Մեզ համար երբեք անցյալ չի դառնալու Արցախը

Սկիզբը՝ էջ 1

ները նաև պատճառ դարձան մեր ազգի մասնատման, ուժերի ջլատման ու պարտությունների, նաև կորուստների մեր սրբությունների և արժանապատվության: Այսպես Արցախը միայնակ մնաց իրեն պատած արհավիրքների օրերին: Արցախցի հայորդիք եղան հալածական հայրենի բնօրրանից, աստանդական և անօթևան: Բայց Տերը, Ով Իր Ծննդյամբ փրկություն ու լույս բերեց խավարի մեջ, ցույց է տալիս, որ Աստծո հետ՝ ամեն նեղություն վերափոխվում է հաղթության, ամեն տառապանք՝ աստվածային հատուցման, ամեն դժվարություն՝ ուժի և զորության, և անգամ մահը՝ հավիտենության: Այս գիտակցությամբ ու հանձնառությամբ մեկտեղենք մեր ջանքերը փորձությունները հաղթահարելու համար և ավետարանչի խոսքերի ճշմարտությունը ցոլացնենք մեր կյանքում. *«Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է, և. խավարը նրան չնվաճեց» (Հովհ. 1.5):*

Սիրելի բարեպաշտ զավակներ ի հայրենիս և ի սփյուռս, Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնին Հայրապետիս պատգամն է, որ մեր սրտերը չդարձնենք հուսահատության, տրտմության մութ ու ցուտտ անձավներ, այլ Քրիստոսի ներկայությամբ լուսավորված ամբողջ հոգեներ, որտեղ մանուկ Հիսուսին աստվածահաճո գործեր ընծայելու մղումն ու ձգտումն են թագավորում: Արդ, ապավինենք մարդեղացյալ Տիրոջը, ամուր մնանք հավատքի մեջ, ամենուր լինենք բարու, սիրո և ճշմարտի առաքյալներ՝ հանուն արդար ու լուսավոր մեր կյանքի: Նախանձախնդիր լինենք հայրենի պետության հզորացմանը և համախմբվենք միասին՝ մեր ողջ ներուժով կասեցնելու համար Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումներն ու ոտնձգությունները: Վերացնենք արհեստականորեն մեր մեջ ստեղծված անջրպետները, ապրենք միմյանց հանդեպ սիրով, որ երկնային օրինությամբ պայծառանան հայրենական ու ազգային մեր անդաստանները, ինչպես Ավետարանում է ասվում. *«Խավարի մեջ նստած ժողովուրդը մեծ լույս տեսավ. և լույս ծագեց նրանց վրա, որ նստում էին մահվան երկրի և ստվերների մեջ» (Մատթ. 4.16):*

Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության հուսաբեր խորհրդով բաջալեր՝ Հայրապետական Մեր հորդորն ելք բերում Արցախից տեղահանված Մեր զավակներին: Սիրելիներ, դուք անօրինակ հերոսական և անընկճելի ոգով ամենայն արժանապատվությամբ և անտրտունջ հաղթահարել և հաղթահարում եք ձեզ պատուհասած նեղությունները: Մեզ համար երբեք անցյալ չի դառնալու Արցախը, որը մենք շարունակելու ենք փայփայել մեր սրտում ու հոգում՝ ամենայն ջանք ի գործ դնելով արցախահայության իրավունքների պաշտպանության համար: Մնացեք լի հոգսով՝ Աստված ձեզ բարիքներ և օրհնություններ պիտի պարգևի ձեր դրած գրկանքների փոխարեն: Ձեր դժվարություններում դուք միայնակ չեք: Ձեզ հետ են ի հայրենիս և ի սփյուռս հավատավոր ձեր եղբայրներն ու քույրերը, ովքեր պիտի շարունակեն բոլոր հնարավոր միջոցներով սատար ու օգնական լինել ձեզ: Միասին մենք դուրս պիտի գանք առկա ծանր իրավիճակից և կառուցենք խաղաղ, բարօր ու ապահով ապագան մեր ժողովրդի ու հայրենիքի: Հավատում ենք մեր նոր կյանքի արշալույսին, քանզի իավարը չի կարող արգելք լինել արևածագին: Առավոտվա լույսի հետ, Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի հայցի համաձայն, մեր հոգիներում պիտի պայծառանա Աստծո իմանալի լույսը, և ինչպես Տերն է ասում մարգարեի շուրթով՝ *«Արագ պիտի մոտենա Իմ արդարությունը, և Իմ փրկությունը պիտի ելնի ինչպես լույս» (Եսայի 51.5):*

Այս հուսառատությամբ ու հավատով, Սուրբ Ծննդյան ավետիսով եղբայրական Մեր ողջույնն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին, քոյր Եկեղեցիների հոգևոր Պետերին՝ հայցելով Քրիստի օրհնությունն ու շրջակցությունը և գահակալության արևշատ ու արդյունալի տարիներ: Հայրապետական Մեր սերն ու բարյաց մաղթանքներն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու հոգևոր դասին և հավայն հավատավոր Մեր ժողովրդին:

Սուրբ Ծննդյան շնորհաբեր այս օրը Մեր աղոթքն ենք վերառաքում առ Փրկիչ մեր Տերը: Ով մանկացյալ Հիսուս Քրիստոս, Որդի Աստծո, մեր փրկության համար մարմնացար և աշխարհ եկար ու մարդկության հանդեպ անսահման սիրովդ երկնառաք շնորհների լույսը ծագեցրիր բոլոր Քեզ հավատացողների հոգիներում: Խաղաղություն ու բարություն պարգևիր աշխարհին ու մեր հայրենիքին: Ազատիր մեզ ամենայն չարից ու չարիքից, մխիթարություն շնորհիր պատերազմի արհավիրքներից ու ծանր կորուստներից խռովահույզ ու վշտակիր մեր սրտերին: Ներիր և թողություն շնորհիր մեզ, որպեսզի մեղքերն ու անկումները չփակեն մեր առջև ճանապարհը մեր տեսիլքների իրագործման և ակունքները Քո անբավ բարիքների և անսպառ ողորմության: Սուրբ Աջիդ խնամքի ներքո պահպանիր հայրենիքի սահմանները հսկող մեր քաջարի զինվորներին: Շուտափույթ վերադարձ պարգևիր պատանդ պահվող գերյալ հայորդիներին, այլև անհայտ կորած մեր զավակներին: Երկնային երանական հանգստության և լուսեղեն օթևանների արժանացրու պատերազմում զոհված մեր հերոս նահատակներին: Թող հաժայն հայության մեջ, ինչպես Սուրբ Ծննդյան մսուրում, շողարձակի Քո լուսավոր ներկայությունը, որպեսզի Քեզանով զորացյալ դիմակայեք բոլոր փորձություններին և ընթանանք դեպի հաղթական զարթնումը մեր ժողովրդի՝ փառավորելով Քեզ հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Զեզ եւ մեզ մեծ աւետիս

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏԵՂԵԿԱՏԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
6 ՀՈՒԼԻՍԻ 2024Թ.

2024-ն ինչ-որ տեղ վտանգավոր պահ է Հայաստանի համար

2024-ին Հայաստանին սպասում են բազմաթիվ մարտահրավերներ, համոզված է ղարաբաղյան հակամարտության մասնագետ, Քարնեգի հիմնադրամի ավագ փորձագետ Թոմ դը Վաալը: Փորձագետի հետ «Ազատության» հարցազրույցն ամբողջությամբ ներկայացնում ենք ստորև.

ՀՐԱՉՅ ԹԱՄՐԱԶՅԱՆ. - Անցյալ ամիս Դուք շատ կարևոր վերլուծություն եք հրապարակել հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ, որը վերնագրված է «Հայաստանի գոյաբանական պահը»: Վերնագիրն ինքնին շատ խոսուն է: Ի՞նչ եք կարծում, սա իսկապե՞ս Հայաստանի համար վճռորոշ, գոյաբանական պահ է: Կարո՞ղ եք, ընդհանուր առմամբ, բացատրել, որից հետո մենք արդեն մանրամասն կխոսենք:

ԹՈՄ ԴԵ ՎԱԱԼ. - Իհարկե: Դե, վերնագիրն իմը չէր, բայց, անկասկած, սա շատ վճռորոշ, կարևոր, ինչ-որ տեղ վտանգավոր պահ է Հայաստանի համար 2024 թվականը: Երկիրը կանգնած է թերևս ամենադժվար ընտրությունների առջև՝ համեմատելի 1980-ականների վերջին կամ նույնիսկ 1920-ականների իրավիճակի հետ: Խոսքն, իհարկե, Ղարաբաղի կորստի և այնտեղից հայ բնակչության փախուստի մասին է: Սա լուրջ պահ է Հայաստանի համար, որը ոմանք համեմատում են 1920 թվականի կամ նույնիսկ 1915 թվականի 8ե-դասպանության հետ: Սա նաև կլինի այն տարին, երբ Հայաստանը առերեսվելու է ոչ միայն Ադրբեջանից եկող սպառնալիքի, այլև Ռուսաստանի հետ հարաբերությունների կորստի կամ խզման սպառնալիքի հետ: Այսպիսով, 2024 թվականին Հայաստանին անկասկած սպասում են բազմաթիվ մարտահրավերներ:

ՀՐԱՉՅ ԹԱՄՐԱԶՅԱՆ. - Շատ հայերի համար Ռուսաստանը ոչ միայն լքել է նրանց, այլև դավաճանել շատ դրամատիկ ձևով: Եթե հայաստանցիների համար Ռուսաստանի դավաճանությունն ապացուցված մի բան էր դեռևս Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղը գրավելուց շատ առաջ, ապա Լեռնային Ղարաբաղի հայերը դա հակացան միայն այն բանից հետո, երբ ադրբեջանցիները հարձակվել էին իրենց վրա: Ձեր վերլուծության մեջ Դուք խոսում եք տարածաշրջանում Ռուսաստանի դերի, Հարավային Կովկասում Ռուսաստանի արտաքին քաղաքականության փոփոխության մասին: Դուք դա որակեցիք որպես նրա արտաքին հարաբերությունների զգալի կառուցվածքային վերահայտնագործություն: Բացատրե՞ք, խնդրում եմ, ո՞րն էր Հայաստանից այդ զգալի հեռանալու պատճառը:

ԹՈՄ ԴԵ ՎԱԱԼ. - Սկսենք նրանից, որ, իհարկե, Ռուսաստանն այս տարածաշրջանում միշտ ունեցել է բազմաթիվ շահեր: Թեև գուցե միշտ էլ ավելի ամուր հարաբերություններ է ունեցել Հայաստանի հետ, նա երբեք էլ չի հրաժարվել Ադրբեջանի հետ հարաբերություններից: Եթե նայենք ղարաբաղյան հակամարտության նորագույն պատմությանը, ապա կտեսնենք, որ եղել են պահեր, երբ Մոսկվան ավելի մոտ էր Բաքվին, օրինակ՝ 1990-1991 թվականներին: Ռուսաստանի համար իր շահերն են առաջնահերթ, և հայերի քրիստոնյա լինելու փաստը, այնտեղ ավանդական պատմական հարաբերությունների առկայությունն այնքան էլ կարևոր չեն: Բայց, վստահաբար, Մոսկվան շարունակում է մնալ Հայաստանի անվտանգության հիմնական ապահովողը: Կա ռազմական դաշինք, կան պարտավորություններ, որոնք Մոսկվան ստանձնել է Հայաստանի հանդեպ: Ինչ փոխվեց: Ակնհայտորեն, վիճակը սկսեց փոխվել 2018 թվականի Թավշյա հեղափոխությունից հետո, երբ Հայաստանում իշխանության եկավ Նիկոլ Փաշինյանը, ով Մոսկվայի տեսանկյունից շատ ավելի անկախատեսելի, անվստահելի գործընկեր էր, մինչդեռ Իլիամ Ալիևն Ադրբեջանում շարունակում էր մնալ շատ ավելի կանխատեսելի և վստահելի գործընկեր: Դա փոփոխություններից մեկն էր:

Այնուհետև մենք տեսանք 2020 թվականի պատերազմը, երբ Մոսկվան միջամտեց միայն վերջին պահին: Մինչ դարաբաղցիները ողջունեցին Մոսկվայի միջամտությունը, կարծում եմ, որ հայերն արդեն գիտակցել են այդ փոփոխությունը: Կարծում եմ՝ վճռորոշ պահը Ռուսաստանի ներխուժումն էր Ուկրաինա 2022 թվականի փետրվարին, որից հետո Ռուսաստանի առաջնահերթությունները փոխվեցին, ու ամեն ինչ սկսեց պտտվել Ուկրաինայի հետ պատերազմի, Արևմուտքի հետ պատերազմի շուրջ: Կովկասը երկրորդական է դարձել, ամեն ինչ այժմ երկրորդական է այդ պատերազմական ջանքերի համեմատ: Եթե նայեք, թե ինչ ունենք տեղում, ապա կտեսնեք, որ մի կողմից կա Հայաստան, որն ունի ժողովրդավարական իշխանություն, որի մտադրությունները կարծես թե ավելի եվրոպամետ են, և կա [Ռուսաստանի տեսանկյունից] շատ ավելի վստահելի գործընկեր ի դեմս Ադրբեջանի: Կարծում եմ՝ եթե կարդաք, թե ինչ են ասում ռուս պաշտոնյաները պատերազմի սկսելուց ի վեր, դա այն է, որ նրանք պետք է վերակողմնորոշեն Ռուսաստանի ողջ տնտեսությունը Արևմուտքից դեպի Հարավ և Արևելք, իսկ Հարավը նշանակում է Վրաստան, բայց դա նաև նշանակում է հատկապես Ադրբեջան՝ երկաթուղային երթուղին դեպի Ադրբեջան, Կասպից ծով: Ադրբեջանը Ռուսաստանի համար հիմնականում ճանապարհ է դեպի հարավ՝ դեպի Իրան, դեպի Մերձավոր Արևելք: Եվ այդ դեպքում Հայաստանը դառնում է պասկաս կարևոր: Դեռ դա հավար էլ, կարծում եմ, մենք տեսանք սա: Պատմականորեն առաջին անգամ Ռուսաստանը չարձագանքեց, նրա խաղաղապահ ուժերը հիմնականում չեն արձագանքել: Ակնհայտորեն նրանք նախապես տեղեկացված էին, որ Ադրբեջանը պատրաստվում է գրավել Ղարաբաղը:

ՀՐԱՉՅ ԹԱՄՐԱԶՅԱՆ. - Ինչ եք կարծում, դա միտումավոր անտարբերությո՞ւն էր, արդյո՞ք նրանք իրենց լռությամբ փաստացի անցան Ադրբեջանի կողմը ու նույնիսկ ինչ-որ չափով օգնում էին Ադրբեջանին: Օրինակ, երբ ադրբեջանցիները վերջին անգամ հարձակվեցին Լեռնային Ղարաբաղի վրա՝ ստիպելով նրա հայ բնակչությանը հեռանալ, մենք գյուղերից հաղորդումներ էինք ստանում, որ սկզբում ռուսները գալիս էին ու փորձում համոզել հայերին վայր դնել զենքերը և պարզապես փախչել դեպի Հայաստան: Սրանք կվայրեններ են ու սրանք մեկ-երկու կվայրեններ չեն, իրականում դրանցից շատ կա: Եվ դա ինձ ստիպում է եզրակացնել, որ Ռուսաստանն իսկապես օգնում էր ադրբեջանցիներին՝ գրավել Լեռնային Ղարաբաղը: Արդյո՞ք այդպես էր: Ինչ եք կարծում:

ԹՈՄ ԴԵ ՎԱԱԼ. - Ակնհայտ է, որ մենք շատ տեղեկություններ չունենք: Սա անշուշտ մի մասն է բարձր մակարդակի զրույցների՝ նախագահներ Ալիևի և Պուտինի միջև, ովքեր, իհարկե, միմյանց շատ լավ ճանաչում են արդեն 20 տարի: Կարծում եմ՝ մենք նույնը քննարկել ենք նաև Լաչինի միջանցքի արգելափակման հետ կապված իրադարձությունների համատեքստում: Արդյո՞ք Ռուսաստանը թույլ էր տալիս, որ դա տեղի ունենա, թե՞ Ռուսաստանը չուժազանց թույլ էր: Ենթադրում եմ, որ դա երկուսի համադրությունն է: Ռուսաստանը շատ ավելի թույլ է, Ադրբեջանը օգտագործում էր դա: Բայց, վստահաբար, կարծում եմ, որ Ռուսաստանը հաստատ կարող էր կանխատեսել այդ ծավալի օպերացիան, այդ մասշտաբի գործողությունը, նրանք կարող էին տեսնել դրան նախորդող ռազմական նախապատրաստությունը: Նրանք ունեին իրենց տեղեկությունը, ունեին իրենց աղբյուրները, և ոչինչ չձեռնարկեցին՝ դա կանխելու համար: Այնպես որ, ինչ-որ առումով ես սա դիտարկում եմ որպես Մոսկվայի կողմից ոչինչ չանելու միտումավոր որոշում: Կարծում եմ, որ ռուսերի արած միակ դրական բանն այն է, որ հայերի ելքը Ղարաբաղից իրականացվեց ի հեղել: Իհարկե, կան մարդիկ, որ զոհվել են ճանապարհին, սակայն ադրբեջանական կողմից բռնություն չի եղել: Նրանք նպաստեցին նրան, որ Ղարաբաղից հայերի զանգվածային ելքը լինի խաղաղ: Բայց դրանից զատ, այո՛, թույլ տվեցին, որ դա տեղի ունենա: Իսկ Բաքվի և Մոսկվայի միջև, անշուշտ, շատ կապեր կան:

ՀՐԱՉՅ ԹԱՄՐԱԶՅԱՆ. - Երկար ժամանակ Հայաստանը մեծապես հենվում էր Մոսկվայի վրա իր արտաքին և անվտանգության քաղաքականության հարցում՝ ըստ էության վճռական որոշումների կայացումը հանձնելով Ռուսաստանին: Միայն վերջերս Հայաստանը քայլեր ձեռնարկեց այս կախվածությունից դուրս գալու համար՝ ձգտելով դիվերսիֆիկացնել իր արտաքին հարաբերությունները, պաշտպանության և անվտանգության ոլորտում իր քաղաքականությունը: Պատմականորեն թվում էր, որ առանց Մոսկվայի հավանության ոչ մի էական արտաքին քաղաքական ընտրություն չէր կատարվել: Հատկանշական է, որ կար ժամանակ, երբ Հայաստանն ուներ արտաքին գործերի նախարար, ում ընտանիքի մերձավոր անդամները Նշանավոր պաշտոնյաներ էին զբաղեցնում Ռուսաստանում: Խոսքս Էդվարդ Նալբանդյանի մասին է, ում աներն ու աներձագը իսկապես շատ կարևոր քաղաքական դեմքեր էին Ռուսաստանում: Այս լույսի ներքո արդյո՞ք կարող ենք Հայաստանի ռազմական և աշխարհաքաղաքական անհաջողությունները վերագրել այն բանին, որ Հայաստանը երկար տարիներ ապավինել էր Ռուսաստանին՝ որպես իր անվտանգության հիմնական ապահովվողի:

ԹՈՄ ԴԵ ՎԱԱԼ. - Սկսենք նրանից, որ, իհարկե, Հայաստանը միշտ էլ փորձել է դիվերսիֆիկացնել իր արտաքին քաղաքականությունը: Սա այդպես է եղել և 90-ականներին Տեր-Պետրոսյանի օրոք, դա անվանում էին կոմպլեմենտար քաղաքականություն, երբ կային կապեր Եվրոպայի, ԱՄՆ-ի, Մերձավոր Արևելքի հետ: Ռուսաստանը պետք է լիներ բազմաթիվ գործընկերներից միայն մեկը: Բայց, ինչպես Դուք եք ասում ու շատ ճիշտ եք ասում, ռազմական և տնտեսական կախվածությունը Մոսկվայից շատ ուժեղացավ, հատկապես Ռոբերտ Քոչարյանի օրոք, երբ բոլոր տնտեսական ակտիվները փոխանցվեցին Ռուսաստանի վերահսկողությանը, երբ եղավ Գյումրիի ռազմաբազայի ընդլայնումը և այլն: Այսպիսով, դա էր իրականությունը, և այդ կախվածությունը դեռ շարունակվում է: Նայեք թվերին. Հայաստանի գազի 80 տոկոսից ավելին դեռ գալիս է Ռուսաստանից՝ Վրաստանի տարածքով, ցորենի 90 տոկոսը գալիս է Ռուսաստանից: Ակնհայտորեն Ռուսաստանի հետ առևտուրը շարունակում է կարևոր մնալ ու այդ առևտուրը կատարվում է Վրաստանի տարածքի միջոցով: Երբ Ռուսաստանը փակում է Լարսի անցակետը, դա ազդում է Հայաստանի տնտեսության վրա: Ազդեցությանն բոլոր ծակները դեռ կան, սակայն, վստահաբար, այժմ ջանքեր են գործադրվում հեռանալ դրանից: Կարծում եմ՝ ոմանք կասեն, որ դա այնքան էլ հմտորեն չի արվում, որ գուցե իսկապես կլիներ ավելի շատ հեռանալ ռուսական կախվածությունից և ավելի քիչ խոսել դրա մասին: Բայց Նիկոլ Փաշինյանի այս իշխանությունը, կարծես թե, ավելի շատ է խոսում ու քիչ անում, որը գուցե ռազմավարական առումով այդքան էլ իսկական չէ, բայց հաստատ այդ փոփոխությունն այժմ ընթացքի մեջ է:

ՀՐԱՉՅ ԹԱՄՐԱԶՅԱՆ. - Թեև Ադրբեջանը փորձում է ավելի քիչ խոսել «Արևմտյան Ադրբեջան» և «Զանգեզուրի միջանցք» մասին, նա դեռևս պահպանում իր հավակնությունը միջանցքի նկատմամբ, որը Հայաստանի տարածքով Ադրբեջանին կկապի Նախիջևանի հետ: Բաքուն դեռ հույս ունի ամբողջական վերահսկողություն սահմանել այդ ճանապարհի վրա կամ որ առնվազն ռուսական ԱԴԾ-ն կվերահսկի այդ ճանապարհը: Ադրբեջանի համար Ռուսաստանը նույնպես կարող է հարմար գործընկեր լինել Սյունիքում, որի հետ այն նույնպես կարող է գործարք կնքել, ինչպես դա եղավ Լեռնային Ղարաբաղում: Ի՞նչ եք կարծում, Ադրբեջանը դեռ ի վիճակի է և ցանկանում է Հայաստանի տարածքով ճանապարհ բացել Նախիջևանի հետ կապ հաստատելու համար, թե՞ նա հրաժարվել է ռազմական տարբերակից: Որոշ փորձագետներ, քաղաքական գործիչներ ինչպես Հայաստանում, այնպես էլ դրսում կարծում են, որ ռազմական ճանապարհով հարցը լուծելու գայթակղությունը Ադրբեջանի մոտ դեռ պահպանվում է: Ի՞նչ եք կարծում:

ԹՈՄ ԴԵ ՎԱԱԼ. - Կարծում եմ՝ ամեն ինչ դեռ հնարավոր է: Ադրբեջանը դեռ ուժեղ է: Հայաստանը դեռ թույլ է: Այսպիսով, ամեն ինչ հնարավոր է: Սկսենք նրանից, որ այս անորոշ աշխարհում մենք պետք է պատրաստ լինենք կանխատեսել անկանխատեսելին: Միաժամանակ, կարծում եմ, որ Ադրբեջանի համար շատ ռիսկային է բռնի ուժով վերցնել Մեղրին կամ Սյունիքը: Սա Հայաստանի միջազգայնորեն ճանաչված ինքնիշխան տարածքն է: Եթե ուժով եք վերցնում այն, ուրեմն ձեզ այնպես եք պահում, ինչպես Ռուսաստանը Ուկրաինայում: Նաև, եթե ուզում եք երկաթգիծ կառուցել և ուզում եք միջազգային աջակցություն այդ երկաթուղու համար, ապա չպետք է տարածք բռնակցեք: Դուք չեք կարող ստիպել Համաշխարհային բանկին և այլ մարդկանց համագործակցել ձեզ հետ՝ երկաթուղու կառուցման գործում: Իմ ենթադրությունն այն է, որ սա հարկադրանքի ռազմավարություն է, երբ Հայաստանի նկատմամբ հարկադրական մարտավարություն ես օգտագործում՝ փորձելով ստիպել նրան ընդունել այս երկաթուղին ադրբեջանական պայմաններով: Եվ, իհարկե, օգտագործում ես ռուսական քարտը, քանի որ այստեղ հավընկնում կա Ռուսաստանի շահերի հետ: Մենք հիշում ենք 2020 թվականի նոյեմբերի համաձայնագիրը, որն, ըստ էության, չգործող է, բայց դրա մի տարրը, ինչպես Դուք նշեցիք, այն է, որ Ռուսաստանի ԱԴԾ-ն պետք է պահպանի այդ երթուղին: Ես երկու անգամ զրուցել եմ ադրբեջանցի պաշտոնյաների հետ և նրանց հարցրել. - «Ինչո՞ւ եք սատարում դրան»: Եվ նրանք ասացին, որ դա ամենալավ տարբերակն է: Այսպիսով, Ռուսաստանն ու Ադրբեջանը հստակ պայմանավորվել են այդ պնդում էր, դա կարող է ձգձգել խաղաղության համաձայնագրի ստորագրումը: Այլ կարծիքի է արտգործնախարար Արարատ Միրզայանը: Ընդդիմությունն ասում է, որ եթե այս հարցերը բացառվեն, ապա խաղաղության պայմանագիրը պարզապես դատարկ խոստումների շարադրություն է լինելու: Ի՞նչ եք մտածում այս հարցում:

ԹՈՄ ԴԵ ՎԱԱԼ. - Իհարկե, խաղաղության համաձայնագրի ստորագրումը միայն սկիզբն է: Ակնհայտ է, որ անհրաժեշտ է խաղաղության համաձայնագրի իրականացում: Իսկ կոնֆլիկտաբանության մեջ հայտնի վիճակագրություն կա, որ խաղաղ համաձայնագրերի կեսից ավելին խափանվում են հինգ տարվա ընթացքում: Իսկ խոսքը բավականին բարդ խաղաղության համաձայնագրերի մասին է: Այնպես որ, դա միայն ստորագրումը չէ, դա ակնհայտորեն նաև իրականացումն է: Հայաստանն ասում է, որ ցանկանում է խաղաղության համաձայնագրի միջազգային երաշխիքներ, և դա նշանակում է, որ միգուցե պետք է ուժեղացված մոնիտորինգի ներկայություն լինի, ինչպիսին եվրոպական մոնիտորինգի ներկայությունը սահմանին, որպես զի դա բարձրացնի զսպման գործոնը ու հետ պահի Հայաստանի դեմ ուժի կիրառումից: Կարծում եմ՝ սա է գաղափարը: Եվ հետո փորձում եք հնարավորինս միջազգայնացնել հարցը: Եվ այստեղ մենք տեսնում ենք լարվածություն Հայաստանի և Ադրբեջանի միջև, որն ասում է՝ Ադ, մեզ պետք չէ որևէ միջազգային պայմանագիր, կամ մեզ պետք են տարածաշրջանային լուծումներ, որոնց տակ նկատի ունեն Թուրքիային, Ռուսաստանին և Իրանին՝ բացառելով Արևմուտքը: Կարծում եմ՝ սա է հիմնական խնդիրը: Ինչ վերաբերում է վերադարձի իրավունքին, ապա, կարծում եմ, դարաբաղցիների մեծամասնությունը ներկայիս պայմաններում չի ցանկանում վերադառնալ հայրենիք՝ ադրբեջանական տիրապետության տակ: Միգուցե նրանք կուզեն այցելել, կուզեն այիր հետ ստանալ իրենց ունեցվածքը, գուցե ցանկանան այցելել ընտանեկան գերեզմաններ կամ տեղափոխել այդ գերեզմանները Հայաստան: Բայց ես չեմ կարծում, որ որևէ մեկը խոսում է մոտալուտ վերադառնալու իրավունքի մասին: Իմ կարծիքով՝ վերադարձի այս իրավունքը պետք է լինի ընդհանուր և համապարփակ: Մենք խոսում ենք վերադարձի մասին, որը պետք է վերաբերի բոլորին, դրա նկատմամբ պետք է լինի որոշակի միջազգային վերահսկողություն, և դա նշանակում է ընդհուպ 1988-1990 թվականների տեղահանվածներին: Այնպես չէ, որ շատերը կցանկանան վերադառնալ Բաքու, Սումգայիթ, բայց կարծում եմ, որ իրավունքը պետք է հաստատվի միջազգայնորեն, և դա պլինի ապագա խաղաղության համաձայնագրի մի մաս:

ՀՐԱՉՅ ԹԱՄՐԱԶՅԱՆ. - Դուք բազմիցս եղել եք տարածաշրջանում, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղում: Դուք եղել եք Ստեփանակերտում: Ստեփանակերտի՝ այդ ուրվական քաղաքի լուսանկարներն ու տեսանյութերը՝ դատարկ փողոցներով, էթիկ զտումների վառ ապացույցն են: Ողբերգության ծավալը հսկայական է, բայց այն, թե ինչպես է աշխարհին արձագանքել այդ մարդկային տառապանքներին, ավելի քան 100 հազար բնակչություն ունեցող պատմական հայկական շրջանի հայթափմանը, առնվազն անբավարար էր, իսկ շատ հայերի համար՝ անմարդկային: Ի՞նչ է ձեր մտքով անցնում այս լուսանկարներին նայելիս: Ինչպե՞ս կբնութագրեք այն, ինչ տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղում:

ԹՈՄ ԴԵ ՎԱԱԼ. - Կարծում եմ, որ դա ողբերգություն է: Ինչպես ասացիք, ես բազմիցս եղել եմ Ղարաբաղում: Ես ընկերներ ունեմ, ովքեր այնտեղ կորցրել են իրենց տները: Բայց կարծում եմ, որ դա ողբերգություն է, որը երկար տարիների արմատներ ունի: Իմ հույսը միշտ եղել է այն, որ ադրբեջանցիները իրենց շրջանները, քանի որ ադրբեջանական կողմում ակնհայտորեն երկար տարիներ ուրվական քաղաքներ են եղել: Ես տեսա նաև Ադդամը, որտեղից նույնպես բնակչությանը վտարեցին: Այսպիսով, իմ հույսն այն էր, որ մարդիկ կա՛մ կվերադառնան իրենց տները, կա՛մ կվանան իրենց տներում: Եվ ես ողբերգական եմ համարում, որ Ղարաբաղն իր դարավոր հայկական ներկայությամբ և պատմությամբ այժմ հայթափված է: Դա ինձ շատ է տխրեցնում: Բայց ես նաև կարծում եմ, որ սա, ցավոք սրտի, ոչ միայն ադրբեջանական, այլ հայկական կողմի քաղաքական գործիչների երկար տարիների ընթացքում բազմաթիվ սխալ գործողությունների գինն է, գինն է այն մաքսիմալիզմի, որը մենք տեսել ենք: Ցավոք, հաղթեց մաքսիմալիզմը, իսկ խաղաղ փոխզիջումը չկարողացավ հաղթել:

ՀՐԱՉՅ ԹԱՄՐԱԶՅԱՆ. - Մի փոքր կմանրամասնե՞ք այդ մաքսիմալիզմի պահը, խնդրում եմ: Սա կարևոր է:

ԹՈՄ ԴԵ ՎԱԱԼ. - Կոնկրետացնեմ: Այդ պահը 2019-ին էր: Մենք տեսանք ռազմական համագործակցություն Իլհամ Ալիևին՝ Ստեփանակերտի իրապարակում տոնակատարության այդ սարսափելի տեսարանները, բայց նույն իրապարակում 2019-ին, եթե հիշողությունս չի դավաճանում, Փաշինյանը նույնպես ելույթ ունեցավ՝ ասելով, որ «Արցախը Հայաստան է և վերջ»: Կարծում եմ՝ դա այն պահն էր, երբ Ադրբեջանը նույնպես հրաժարվեց դիվանագիտությունից ու փոխզիջումներից ու սկսեց շարժվել դեպի պատերազմ: Հայ քաղաքական գործիչների գործն էր ադրբեջանցիներին հույս տալ, որ նրանք կվերադարձնեն իրենց տարածքները: Եվ այդ հույսը, կարծում եմ, ավարտվեց «Արցախը Հայաստան է» խրախսկությունով: Այնպես որ, Փաշինյանի, հայ քաղաքական գործիչների կողմից այս տարիների ընթացքում հաստատ սխալներ են թույլ տրվել, որոնք հանգեցրել են պատերազմի: Իսկ պատերազմը հայերի համար ողբերգական ավարտ է ունեցել: Ես միշտ ասում եմ, որ իմ նման մարդկանց համար, ովքեր ցանկանում էին տեսնել խաղաղության պայմանագիր, դա իսկապես շատ տխուր տեսարան է:

ՀՐԱՉՅ ԹԱՄՐԱԶՅԱՆ. - Այժմ ես ուզում եմ, որ Դուք խոսք ՁԷր հիմնական կետերից մեկի մասին, որ Սյունիքի մարզը կամ Զանգեզուրը վերադարձել է օրակարգ, և որ մեծ տեղոթյունների քաղաքականությունը տարածաշրջանը դարձրել է աշխարհաքաղաքական առումով նշանակալի վայր: Ստե տերդությունները կրկին վերադարձել են իրենց շահագրգռվածությամբ՝ օգտվելու այս իրավիճակից: Ինչպես նշում եք Դուք, Եվրամիությունը խաղաղ դիտորդական առաքելություն է տեղակայել այնտեղ Ադրբեջանի կողմից սահմանից այս կողմ ներխուժումից հետո: Ինչ է լինելու: Ի՞նչ կարծիք ունեք դրա վերաբերյալ:

ԹՈՄ ԴԵ ՎԱԱԼ. - Ինչպես գրել էի այդ հոդվածում, ո՞վ կիավատար մի քանի տարի առաջ, որ Կապան քաղաքում կտեսնեք Եվրամիության դրոշներ, Իրանի դրոշներ, որ ֆրանսիացիները այնտեղ հյուպատոսություն կուզեն բացել, որ ռուսները այնտեղ են ու որ հանկարծ սա կդառնա միջազգային մրցակցության և դիվանագիտության կենտրոն, ինչպես դա եղել է 1919-1920 թվականին: Բայց դա նորից է կրկնվում: Իսկ ինչո՞ւ է դա տեղի ունենում: Դե, դա վճռորոշ երթուղի է ինչպես հյուսիս-հարավ, այնպես էլ արևելք-արևմուտք ուղղություններին համար: Սկսենք դրանից: Դուք կիիշեք, որ Նախիջևանի Ջուլան խորհրդային-իրանական երկաթուղային սահմանային անցակետ էր, մեծ սահմանակետ էր: Եվ, իհարկե, այն փակվեց, և արդեն 30 տարի գնացքներ չեն անցել այնտեղով: Բայց եթե Սյունիքի, Զանգեզուրի միջով երկաթգիծը վերակառուցվի, ապա միանգամից Ջուլան կրկին դառնում է Ռուսաստանի և Իրանի երկաթուղային անցումը: Այնպես որ, Ռուսաստանն ու Իրանը կրկին հայաց են նետում դեպի այդ տարածաշրջան: Ադրբեջանի համար դա Թուրքիայի հետ կապն է, իսկ Արևմուտքի համար՝ նաև Արևելք-Արևմուտք նոր կապուղի՝ Թուրքիայի, Հայաստանի, Ադրբեջանի տարածքով դեպի Կենտրոնական Ասիա: Այսպիսով, միանգամից այս փոքրիկ՝ 43-կիլոմետրանոց երկաթուղին բոլորին է սկսում հետաքրքրել: Եվ քանի որ ուկրաինական պատերազմը փակել է այս բոլոր Արևելք-Արևմուտք կապերը, Կովկասում այս Արևելք-Յուսիս-Հարավ կապուղիները շատ ավելի կարևոր են դառնում: Եվ ես եմ եթադրում եմ, որ սա է պատճառը, որ բոլորը նայում են հարավային Հայաստանում գտնվող այս փոքրիկ շրջանի ուղղությամբ:

ՀՐԱՉՅ ԹԱՄՐԱԶՅԱՆ. - Արդյո՞ք մենք լուրջ ջանքեր ենք տեսնելու Հայաստանի զինված ուժերի և անվտանգության համակարգի ամրապնդման ուղղությամբ: Արդյո՞ք Եվրամիությունը կամ ԵՄ անդամ առանձին երկրներ պատրաստ են այդ նպատակով լուրջ գուտարներ ներդնել ու սարքավորումներ տրամադրել: Մենք ԱՄՆ-ից լսեցինք, որ Ադրբեջանը կամ Հայաստանը չպետք է մասնակցեն տրանսպորտային և հաղորդակցման նախագծերին, որոնցում ներգրավված են Ռուսաստանը և Իրանը: Բայց կա արդյո՞ք Արևմուտքում պատրաստակամություն՝ բարելավելու Հայաստանի պաշտպանության ու անվտանգության ոլորտը, օգնել Հայաստանին և Ադրբեջանին վերջապես խաղաղության համաձայնագիր հասնելու համար: Առաջ հայացք նետելով, ինչ եք կարծում այս հարցի շուրջ:

ԹՈՄ ԴԵ ՎԱԱԼ. - Կարծում եմ՝ կա քաղաքական հետաքրքրություն: Կարծում եմ՝ դիվանագիտական հետաքրքրություն կա: Կարծում եմ, որ մի փոքր տնտեսական հետաքրքրություն էլ կա: Ինչ վերաբերում է անվտանգությանը, ապա ես խիստ կասկածում եմ, որ ԵՄ-ն կամ ՆԱՏՕ-ն ներդրումներ կանեն Հայաստանի զինված ուժերում: Հայաստանը դեռևս ՀԱՊԿ անդամ է: Միգուցե Ֆրանսիան ներկրոյվ մակարդակով ինչ-որ բան անի, բայց այստեղ մենք խոսում ենք երկարաժամկետ գործընթացի մասին: Երկարաժամկետ հեռանկարում, կարծում եմ, Հայաստանը կարող է շատ լավ հեռանկարներ ունենալ: Այն ժողովրդավարական երկիր է ու կարծում եմ՝ այդպիսին կմնա: Այն շարունակում է լավ կրթված բնակչություն ունենալ: Հայաստանի համար հեռանկարները կարող են լավ լինել: Բայց դա ավելի երկարաժամկետ հեռանկարում: Կարճաժամկետ հեռանկարում, սակայն, եթե դիտարկենք 2024 թվականը, Սյունիքում շատ բան կարող է այնպես չլինել այն պարագայում, եթե Ռուսաստանը գուցե փորձում է ապակայունացնել Փաշինյանի իշխանությունը: Իսկ այն, ինչ կարող է առաջարկել Արևմուտքը, ցավոք, ավելի երկարաժամկետ է, ոչ այնքան կարճաժամկետ: Այնպես որ, կարծում եմ, որ ամեն ամիս վճռորոշ է:

ՀՐԱՉՅ ԹԱՄՐԱԶՅԱՆ. - Ինչ եք կարծում, արդյոք Ռուսաստանը դեռևս մեծապես շահագրգռված է ապակայունացնելու և փաստացի տապալելու Փաշինյանի կառավարությունը և իշխանության բերելու նախկին ռեժիմի որոշ անդամների, որոնք հավատարիմ են նրան:

ԹՈՄ ԴԵ ՎԱԱԼ. - Կարծում եմ՝ Ռուսաստանն իսկապես կցանկանար դա անել: Բայց եթեադրում եմ, որ գուցե Փաշինյանին օգնում է այն, որ թեև նա ոչ պոպուլյար է (unpopular), բայց Ռուսաստանը՝ ավելի ոչ պոպուլյար է (unpopular): Այնպես որ, սա, եթեադրում եմ, միակ բանն է, որ փրկում է Փաշինյանի իշխանությանն այս պահին: //

«Ռուսների արած միակ դրական բանն այն է, որ հայերի ելքը Ղարաբաղից խաղաղ է եղել»

«Խաղաղության համաձայնագիրը միայն ստորագրումը չէ, դա ակնհայտորեն նաև իրականացումն է»

«Ադրբեջանի համար շատ ռիսկային է բռնի ուժով վերցնել Մեղրին կամ Սյունիքը»

«Զանգեզուրը վճռորոշ երթուղի է ինչպես հյուսիս-հարավ, այնպես էլ արևելք-արևմուտք ուղղությունների համար»

«Իմ հույսը միշտ եղել է այն, որ ադրբեջանցիների խաղաղ վերադարձ կլինի իրենց շրջաններ»

«Զանգեզուրի միջանցք» հնարանքի շուրջ կրքերը նորից բորբոքվում են

Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումը

Ստեր դիրքորոշումը չի փոխվել՝ դեմ ենք տարածաշրջանում սահմանների և աշխարհաքաղաքական փոփոխություններին. սահմանների փոփոխությունը մեզ համար կարմիր գիծ է, դա Իրանի բարձրագույն իշխանությունների մակարդակով է հայտարարվել, և ոչ ոք չի կարող հետ կանգնել դրանից: Այս մասին հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում հայտարարել է **ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մեհդի Սոբհանին**:

Դեսպանն ընդգծել է, որ այլ երկրի տարածքում արտատարածքային միջանցք ստեղծելու որևէ իմաստ չկա, և որ ամեն երկրի հաղորդակցման ուղիները գտնվում են իր ինքնիշխանությունն այդ տարածքում իրագործող պետության ձեռքում:

«Կարծում եմ՝ Հայաստանի տարածքում արտատարածքային միջանցքի հարցի արծարծումը որևէ աղերս չունի միջազգային իրավունքի, երկրների տարածքային ամբողջականության և ազգային ինքնիշխանության հետ: Ինչպես նշված է Հայաստանի վարչապետի «Խաղաղության խաչմերուկ» ծրագրում, Հայաստանի տարածքում տարածքային ցանկացած կապ պետք է գործի այդ երկրի ազգային ինքնիշխանության ներքո: Այն երկրները, որոնք խոսում են Հայաստանի տարածքում արտատարածքային միջանցքի մասին, պատրա՞ստ են արդյոք իրենց տարածքում ստեղծել նման արտատարածքային միջանցքներ: Կարծում եմ՝ պատասխանը բացասական է: Ուստի, այն, ինչն իրենք իրենց համար չեն ցանկանում, ուրիշների համար ևս չպետք է ցանկանան»,– հայտարարել է Իրանի դեսպանը:

* * *

Իրանը հստակ դիրքորոշումներ ունի հարավային Կովկասում տիրող իրավիճակի և տարանցիկ միջանցքների վերաբերյալ: Ինչպես հայտնում է «Ima» գործակալությունը, այս հայտարարությունն արել է Իրանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Նասեր Քանանին՝ անդրադառնալով Թուրքիայի տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարար Աբդուլքադիր Ուրալօղլուի հայտարարությանը:

Աբդուլքադիր Ուրալօղլուն հայտարարել է՝ Թուրքիան ակնկալում է, որ այսպես կոչված «Զանգեզուրի միջանցք» նախագիծը կիրագործվի մինչև 2029 թվականը:

«Մենք մեծ ջանքեր ենք գործադրում տարածաշրջանի երկրներում խաղաղություն, կայունություն և անվտանգություն հաստատելու համար: Մենք ընդգծում ենք՝ տարանցիկ համագործակցության զարգացումը չի կարող աշխարհաքաղաքական փոփոխությունների և երկրների տարածքային ամբողջականության և ազգային ինքնիշխանության խախտման համար հիմք հանդիսանալ»,– ասել է Քանանին:

Հիշեցնենք, որ Ադրբեջանն ու Թուրքիան երեք տարի շարունակ փաստացի պնդում են, որ իրենց արտատարածքային միջանցքը տրամադրվի Հայաստանի Այուևիքի մարզով՝ Նախիջևանի Հեքնավարության և Ադրբեջանի մնացած հատվածի միջև ցամաքային կապ ապահովելու նպատակով: Իրանը բազմիցս դեմ է արտահայտվել այդ սցենարին:

//

Դավիթ Մաթեւոսյանը՝ Մեղրի համայնքի պատվավոր քաղաքացի

Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 142-Ա որոշմամբ Դավիթ Ղևոնդի Մաթեւոսյանին հետմահու շնորհվել է «Մեղրի համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում: Մեղրի համայնքի ավագանու անդամները միաձայն կողմ են եղել առաջարկությանը:

Դավիթ Ղևոնդի Մաթևոսյանը ծնվել է Մեղրու շրջանի Կարճևան գյուղում 1960 թվականի մարտի 22-ին: Ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը՝ ինժեներ հիդրոտեխնիկի որակավորմամբ: 1982-1983 թվականներին որպես աշխատել է Ագարակի հանքաշինական վարչությունում, 1983-1984 թվականներին՝ Մեղրիի ոռոգման և ջրարբիացման համակարգերի վարչությունում՝ ինժեներ, 1984-1985 թվականներին եղել է ՀԼԿԵՄ Մեղրիի շրջկոմի հրահանգիչ, 1985-1991 թվականներին՝ Կարճևանի պետտնտեսության տնօրեն:

1991-1995 թվականներին եղել է Մեղրիի ԼԳ բաժնի պետ:

1995 թվականին ընտրվել է ՀՀ առաջին գումարման ԱԺ պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ, «Հանրապետություն» խմբակցության անդամ, անկուսակցական: 2008 թվականի մարտի 1-ի գործով հուլիսի 17-ին դատապարտվել էր 3 տարվա ազատազրկման: 2009 թվականի հուլիսի 22-ին համաներմամբ ազատ է արձակվել: Հունվել է 2020 թվականի հոկտեմբերի 23-ին Ադրբեջանի ծավալած լայնամասշտաբ պատերազմի ժամանակ: //

Թուրքիայի եւ Ադրբեջանի դիրքորոշումը

Ադրբեջանը մոտ երեք տարի սպասել է, որ Հայաստանը կատարի Նախիջևանի հետ տրանսպորտային հաղորդակցության ապահովման իր պարտավորությունները, և պատրաստ է դիտարկել Կալինինգրադի նման մոդելներ: Այդ մասին հայտարարել է Ադրբեջանի նախագահի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդական Հիքմեթ Հաջիևը գերմանական Berliner Zeitung թերթին տված հարցազրույցում: Նրա խոսքով՝ Բաքուն իրավիրել է համաշխարհային մաքսային կազմակերպությանը՝ կիսվելու իր փորձով և չափանիշներով: Հաջիևը նշել է, որ Ադրբեջանն աշխատում է նաև այլընտրանքային լուծումների վրա, ավելացնում Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու թողունակությունը տարեկան մինչև 5 մլն տոննա, ինչպես նաև Իրանի տարածքով այլընտրանքային երթուղի կառուցում դեպի Նախիջևան:

«Երևանն այս դեպքում դուրս կմնա տարածաշրջանային փոխգործակցության նոր նախագծից, և դրա պատճառը միայն նրա քաղաքականությունն է: Թույլ տվեք նաև հստակեցնել, որ Իրանի տարածքով տրանսպորտային նախագծի իրականացումը չի նշանակում, որ հայաստանի տարածքով երթուղու հնարավորությունն այլևս չի դիտարկվի: Մենք պատրաստ ենք աշխատել հայաստանի հետ: Նախիջևանի հետ հայաստանի տարածքով տրանսպորտային հաղորդակցությունը չի ազդի նրա ինքնիշխանության վրա»,- նշել է Ալիևի խորհրդականը:

Չնայած հաղորդակցությունների նկատմամբ հայաստանի ինքնիշխանության ճանաչման մասին ադրբեջանական կողմի հայտարարություններին՝ Իլհամ Ալիևը վերջերս հայտարարել էր, որ, ըստ Բաքվի, հայաստանի տարածքով դեպի Նախիջևան անցնող հաղորդակցությունների վրա հայկական կողմը սահմանային և մաքսային հսկողություն չպետք է իրականացնի:

* * *

Թուրքիան հույս ունի, որ «Զանգեզուրի միջանցքի» ստեղծման նախագիծը կիրագործվի մինչև 2029 թվականը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից վերջին շրջանում դրական մեսիջներ են հնչել «Զանգեզուրի միջանցքի» վերաբերյալ: «Ինտերֆաքսը» մեջբերում է Թուրքիայի տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարար Աբդուլքադիր Ուրալօղլուի հայտարարությունը, որը նա արել է TVnet թուրքական ալիքին տված հարցազրույցում:

Նա ընդգծել է, որ երբ առաջին անգամ նման նախաձեռնություն է առաջ քաշվել, հայկական կողմը բացասական է արձագանքել, չնայած որ խոսվում էր նաև «Հայաստանի համար այս նախագծից ունեցած օգուտի մասին»:

Նախարարի խոսքով՝ Թուրքիան հույս ունի, որ միջանցքի նախագիծը կիրագործվի մինչև 2029 թվականը:

«Զանգեզուրի ադրբեջանական հատվածը՝ Բաքվից մինչև Հորադիզ ավարտին է մոտենում: Թուրքական հատվածի երկարությունը 224 կմ է: Ընդհանուր առմամբ միջանցքի ստեղծման ողջ գործընթացը 5 տարի կտևի: Կարծում եմ, որ 2028 թվականին ամբողջությամբ կավարտենք բոլոր աշխատանքները», - ասել է Ուրալօղլուն: Նա ընդգծել է, որ միջանցքի հայկական հատվածի երկարությունը մոտ 43 կմ է: «Նրանց (հայաստանին - խմբ.) անհրաժեշտ կլինի պլանավորում և մրցույթներ անցկացնել, որպեսզի միջանցքն ամբողջությամբ ավարտված համարվի: Այդպիսով, Թուրքիան ուղիղ և ավելի հեշտ ելք կստանա դեպի թյուրքական աշխարհի, Կենտրոնական Ասիայի երկրներ», - ասել է նախարարը:

Նա նաև նշել է, որ Իրանն իր կողմից է առաջ քաշել ճանապարհի նախաձեռնություն, որը Ադրբեջանը կկապի Թուրքիայի հետ՝ շրջանցելով Հայաստանը: Անկարան դեմ չէ, որ Իրանը ևս Թուրքիայի և Ադրբեջանի միջև այդ կապի մաս դառնա իր տարածքով, և հույս ունի, որ այդ նախագիծն էլ ժամանակին կիրագործվի:

//

Յալդայի ամենաերկար գիշերն անցկացրինք ԻԻՀ Կապանի հյուպատոսարանում. գեղեցիկ տոն էր, լույսի սպասում...

Իրանի Իսլամական Հանրապետության Կապանի հյուպատոսարանում դեկտեմբերի 21-ի երեկոյան տոն էր...

Տարվա ամենաերկար գիշերն էր մեկնարկում՝ Յալդայի գիշերը, որին պետք է հաջորդեր առավոտը և լույս սփռեր ...

Դեռևս դարեր առաջ իրանական ժողովուրդների կյանքում սկիզբ առած այդ տոնը՝ Յալդայի գիշերը, 2008 թվականին պաշտոնապես ընդգրկվեց Իրանի ազգային գանձերի ցանկում, իսկ 2020-ին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից պահպանվող ոչ նյութական արժեքների համաշխարհային գանձարանի ցանկում:

Տոնակատարությունը սկսելուց առաջ տեղի ունեցավ հյուպատոսարանի մշակութային տարածքի բացումը. մուտքի կարմիր ժապավենը կտրեցին Կապանի ու Սիսիանի համայնքապետեր Գևորգ Փարսյանը, Արմեն Հակոբջանյանը և, իհարկե, Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին:

Մշակութային նորաբաց տարածքում էլ տեղի ունեցավ Յալդային նվիրված տոնական տարությունը, որը բացեց գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին:

Այնուհետև տեսանյութի միջոցով ներկայացվեցին Յալդայի տոնակատարությանը բնորոշ արարողությունները, ավանդույթները: Յալդայի գիշերվա տոնակատարությունը համեմված էր գեղարվեստական հետաքրքիր կատարումներով:

Ուշագրավ էր տոնի առիթով Իրանից Կապան ժամանած Էհսան Զաբիի ելույթը: Իրանի արվեստի համալսարանի դասախոսը, արվեստագիտության դոկտորը քյամանչայով հնչեցրեց Իրանում շատ տարածված «Բարև ձեզ» երգի մեղեդին:

Կապանի արվեստի քոլեջի քանոնի դասարանի ուսանողներ Նարե Տովմասյանը և Ալլա Գրիգորյանը կատարեցին հայկական ժողովրդական երգ-պար՝ «Աման Թելո» (դասախոս՝ Հասմիկ Ցավադյան):

Նույն քոլեջի դուդուկի դասարանի ուսանողներ Մերուժան Ավանեսյանը (միջազգային մրցույթ-փառատոների դափնեկիր) և Ալեքս Բաղդասարյանը նվագեցին հայկական ժողովար՝ «Հուսի տրնգի» (դասախոս՝ Վահիկ Համբարձումյան):

Գեղարվեստական մասն ամփոփվեց Կապանի արվեստի քոլեջի դուդուկի դասարանի ուսանողների և Էհսան Զաբիի կողմից մեղեդիների շարանի հավատեղ կատարմամբ:

Տոնական երեկոյին ելույթ ունեցավ Իրանի արվեստի համալսարանի ռեկտոր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Մուհամմադ Ռեզա Հոսնային, ով նույնպես Կապան էր այցելել տոնին մասնակցելու նպատակով, ով կարևորեց Յալդան՝ այն

Կապանի Գարեգին Նժդեհ հուշահամալիրից բանակ ճանապարհեցին 2024թ. առաջին զորակոչիկներին

Երեսուն կապանցի երիտասարդ հունվարի 9-ին զորակոչվեցին հայոց ազգային բանակ:

Այդ առիթով Կապանի Գարեգին Նժդեհ հուշահամալիրում հավաքվել էին հարյուրավոր քաղաքացիներ Կապանից եւ Քաջարանից:

Զորակոչիկներին ողջերթի խոսք հղեցին Կապանի հոգեւոր հովիվ Տեր Խաչատուր քահանա Հայրապետյանը, Կապանի համայնքապետի տեղակալ Գոռ Թադեւոսյանը, Այուևիքի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Արսեն Գրիգորյանը, Քաջարանի համայնքապետի տեղակալ Զոհրաբ Առաքելյանը, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման Կապանի բաժանմունքի պետի պաշտոնակատար, մայոր Սեւակ Մանուկյանը:

Այնուհետեւ ելույթներ ունեցան Կապանի մշակույթի կենտրոնի մենակատարներ Գագիկ Գրիգորյանը, Սուսաննա Գալստյանը, Ինգա Մանուչարյանը:

Բարի ծառայություն մեր հրաշք տղաներին: //

ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը Կապանի համայնքապետի հետ խոսել է գլխավոր հյուպատոսության բացման մասին

Քննարկվել են մշակութային-հումանիտար և առևտրատնտեսական ոլորտներում համագործակցության հեռանկարային ուղղությունները:

ՌԴ ԱԳՆ առաջատար խմբի ղեկավար Սերգեյ Շաշչիխինը Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանի հետ քննարկել է Կապանում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսության բացման հարցը: Տեղեկությունը հայտնում է ՀՀ-ում ՌԴ դեսպանության մամուլի ծառայությունը:

Սերգեյ Շաշչիխինը շնորհակալություն է հայտնել քաղաքի ղեկավարությանը՝ ՌԴ գլխավոր հյուպատոսություն հիմնելու ուղղությամբ տարվող աշխատանքների շրջանակում գործնական աջակցության համար: Ռուս դիվանագետը նաև կարևորել է Կապանի ստեղծագործական և գործարար շրջանակների ներկայացուցիչների և առաջատար խմբի միջև շփումների ընդլայնելու ուղղությամբ աշխատանքները:

«Մանրամասն քննարկվել են մշակութային-հումանիտար և առևտրատնտեսական ոլորտներում համագործակցության հեռանկարային ուղղությունները»,– նշված է հաղորդագրության մեջ:

Ընդգծվել է ռուսական քաղաքների հետ բարեկամական կապերի հաստատման և զարգացման կարևորությունը:

Հանդիպմանը մասնակցել է «Русский дом»-ի՝ Այուևիքի մարզում նախագծերի համադրող Լյուդմիլա Աղախանյանը:

Նշենք, որ 2023 թվականի նոյեմբերին Sputnik Արմենիայի հետ զրույցում Ռուսաստանի ԱԳՆ առաջատար խմբի ղեկավար Անդրեյ Շանինը հայտնել էր, որ Կապան քաղաքում ՌԴ գլխավոր հյուպատոսությունը կարող է սկսել գործել 2024 թվականի սկզբին:

Ավելի վաղ Ռուսաստանի կառավարության նախագահ Միխայիլ Միշուստինը Կապանում ՌԴ գլխավոր հյուպատոսության հիմնման մասին կարգադրություն էր ստորագրել:

//

Քնչությունը ելույթներ ունեցան Կապանի մշակույթի կենտրոնի մենակատարներ Գագիկ Գրիգորյանը, Սուսաննա Գալստյանը, Ինգա Մանուչարյանը:

Այնուհետեւ ելույթներ ունեցան Կապանի մշակույթի կենտրոնի մենակատարներ Գագիկ Գրիգորյանը, Սուսաննա Գալստյանը, Ինգա Մանուչարյանը:

Բարի ծառայություն մեր հրաշք տղաներին: //

Շնորհավորանք՝ Ռիտա Օվչյանին

Կապանի թիվ 2 ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը ջերմորեն շնորհավորում է կրթօջախի տնօրեն Ռիտա Օվչյանի ծննդյան տարեդարձը. սթափ մտքով, մարդկային առաքինություններով լի՝ սրտացավ, բարի անձնավորություն...

Նրա ստեղծագործական մտքի ու ձգտումների շնորհիվ դպրոցում ծնունդ են առել բազում նորարարություններ՝ Ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստող կազմակերպություն, մենթոր դպրոց, Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի ներկայացրած «ԱԲ (արհեստական բանականություն) սերունդ» դպրոցական փորձարարական ծրագրի մասնակից դպրոց և այլ նախաձեռնություններ:

Սիրելի՛ ընկեր Օվչյան, թող Ձեր կենացը լինի անարատ գինիով լիքը բաժակներով:

Թող Ձեր գլխավերևում միշտ սավառնեն խաղաղության աղավնիներ՝ ջերմություն, հպարտություն ժխտելով հայրենական մեր տանը:

Ամուր առողջություն և արևշատություն Ձեզ, սեր, նվիրում. միշտ շրջապատված լինեք Ձեր եռանդը կրկնապատկող մարդկանցով:

Շնորհավոր Ձեր ծննդյան տարեդարձը, մեր ընկեր Օվչյան...

ԿԱՊԱՆԻ Ն 2 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ

Տաթևի և Տաթևի Մեծ անապատ վանական համալիրները, Որոտան գետի կիրճը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո. նախապատրաստվում է հայտ

Հայաստանը հայտ կներկայացնի «Տաթևի և Տաթևի Մեծ անապատ վանական համալիրները և Որոտան գետի կիրճը» հուշարձանախումբը ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Զինված հակամարտությունների պայմաններում մշակութային արժեքների պաշտպանության կոնվենցիայի» շրջանակում ուժեղացված պաշտպանության կարգավիճակ շնորհելու համար:

Ուժեղացված պաշտպանությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1954 թ. կոնվենցիային կից 1999 թ. երկրորդ արձանագրությամբ մշակված մեխանիզմ է՝ զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների հատուկ պաշտպանություն սահմանելու համար: Այս մասին տեղեկացրին ԿԳՄՍՆ-ից:

Հայտը պատրաստելու համար միջազգային ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով ՀՀ-ի ներկայացրած հայտադիմումը հաստատվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում տեղի ունեցած «Զինված հակամարտությունների պայմաններում մշակութային արժեքների պաշտպանության կոնվենցիայի» (Հաագա, 1954 թ.) կոմիտեի 18-րդ նիստում:

ՀՀ ԿԳՄՍ, արտաքին գործերի, պաշտպանության նախարարությունների, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչության հետ քննարկումներից հետո «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտադիմումը պատրաստել և ներկայացրել է ՅՈՒՆԵՍԿՕ: Հայտադիմումն անցել է Կոնվենցիայի տարբեր մակարդակներով, հաստատվել քարտուղարության կողմից, որից հետո ներառվել է Կոմիտեի դեկտեմբերյան նիստի օրակարգում: Կոմիտեի եզրափակիչ նիստին հայտադիմումը ներկայացրել է Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Խաչիկ Հարությունյանը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հաստատված դրամաշնորհը կազմում է 55 հազար ԱՄՆ դոլար, որով նախատեսվում է իրականացնել Տաթևի և Տաթևի Մեծ անապատ վանական համալիրների կազմի մեջ մտնող բոլոր կառույցների, ենթահուշարձանների եռաչափ լազերային սքանավորում և մանրամասն թվայնացում, կառավարման և ռիսկերի նվազեցման համապատասխան ծրագրերի կազմում, միջազգային փորձագետների խորհրդատվություն, պետական հաշվառման փաստաթղթերի լրամշակում, որոնց հիման վրա կպատրաստվի և ՅՈՒՆԵՍԿՕ կներկայացվի հուշարձանախումբը «Զինված հակամարտությունների պայմաններում մշակութային արժեքների պաշտպանության կոնվենցիայի» հովանու ներքո առնելու հայտը: Ծրագրի տևողությունը 15 ամիս է:

«Տաթևի և Տաթևի Մեծ անապատ վանական համալիրները և Որոտան գետի կիրճը» հուշարձանախումբը 1995 թ. ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում: Հաստատված դրամաշնորհը միաժամանակ կստեղծի բոլոր անհրաժեշտ նախադրյալները՝ հուշարձանախումբը հիմնական ցանկ տանելու ուղղությամբ, որը ևս առաջիկա ծրագրերում է:

Հիշեցնենք, որ 2023 թ. դեկտեմբերի 12-ին Փարիզում տեղի է ունեցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1954 թ. «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի կոնվենցիայի և 1999 թ. 2-րդ արձանագրության կոմիտեի նիստը, որի ընթացքում Հայաստանի Հանրապետությունը կոմիտեի անդամ է ընտրվել 4 տարի ժամկետով:

//

Մահացել է Գուսան Աշոտի որդին՝ Համլետ Դադալյանը

Դեկտեմբերի 21-ի առավոտյան մահկանացուն է կնքել Հայոց մեծ գուսանի որդին՝ Համլետ Աշոտի Դադալյանը:

Դրան նախորդել էր երեք տարի տևած հիվանդությունը, իսկ վերջին տարում ուղղակի ծանր վիճակում էր:

Նրա կինը՝ Վիկտորյա Դադալյանը և դուստրը՝ Հասմիկ Դադալյանը հնարավոր ամեն ինչ արել են Համլետին բուժելու համար, բայց բժշկությունը, ավաղ, ի զորու չի եղել:

Սգավոր գերդաստանին հիմա մեկ այլ հանգամանք է ցավ պատճառում. հնարավորություն չի եղել Համլետ Դադալյանին հողին հանձնել հոր՝ Գուսան Աշոտի գերեզմանի մերձակայքում: Ուստի և հուղարկավորվել է քաղաքի նոր գերեզմանատանը, որ գտնվում է Թոզ կապի գործող գերեզմանատնից հյուսիս՝ ավերակված եկեղեցու մերձակայքում:

Համլետ Դադալյանի մահվան և դեկտեմբերի 23-ին տեղի ունեցած հուղարկավորության մասին, ցավոք, անտեղյակ է եղել Գորիսի հանրության մեծ մասը, որը շաղված-շփոթված մեր օրերին բնորոշ վիճակով միայն կարելի է բացատրել: Եվ հարյուրավոր գորիսեցիներ անկեղծորեն ափսոսանք են հայտնում, որ չեն կարողացել հրաժեշտ տալ Ամենայն հայոց գուսանի որդուն:

Համլետ Աշոտի Դադալյանը ծնվել է 1944 թ. ապրիլի 19-ին, Գորիս քաղաքում: Երեք ամսականում կորցրել է մորը՝ տիկին Հասմիկին: Միջնակարգն ավարտել է Երևանի Նար-Դոսի անվան դպրոցում: Աշխատել է Երևանի կահույքի ֆաբրիկայում, այնուհետև՝ էլեկտրատեխնիկական գործարանում: 1965 թ. տեղափոխվել է Գորիս, հետո կրկին բնակվել Երևանում, որից հետո վերջնականապես բնակություն հաստատել ծննդավայրում: Գորիսում աշխատել է գյուղտեխնիկումում՝ արհեստանոցի վարիչ:

1965 թ. ամուսնացել է Վիկտորյա Դադալյանի հետ, ունեցել են հինգ զավակ՝ Հարությունը (մահացել է 1993-ին՝ 25 տարեկանում), Հայրապետ, Հայկ, Հասմիկ (մահացել է մոտ երկու տարեկանում) և նորից Հասմիկ:

«Սյունյաց երկրի» խմբագրակազմը ցավակցում է Գուսան Աշոտի պաշտելի գերդաստանին՝ Համլետ Դադալյանի մահվան կապակցությամբ:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

* * *

«Սյունյաց երկիրը» առիթ է ունեցել մի քանի անգամ զրուցել Համլետ Դադալյանի հետ:

Վերջին զրույցը 2017 թվականին էր, երբ պատրաստվում էր պարբերականի հատուկ համար՝ նվիրված Գուսան Աշոտի 110-ամյակին:

//

Խոսք հիշատակի. Լևոն Ներսիսյան

Որ տարվա առավոտյան երկրային կյանքին հրաժեշտ տվեց Կապանում ճանաչված և հարգված մի անձնավորություն՝ Լևոն Գրիշայի Ներսիսյանը: Մարդ, ում գիտակցական կյանքը նվիրված էր հայրենի եզերքին և իր հայրենակիցներին:

Լևոն Ներսիսյանը ծնվել է 1951 թվականին ապրիլի 24-ին Կապանի Լենհանքեր բանավանում: Հայրը՝ Գրիշա Ներսիսյանը, լեռնափրկարար ջոկատի վաշտի հրամանատարն էր, մայրը՝ մայրենի լեզվի ուսուցչուհի: Բարձր առաջադիմությամբ ավարտել է Լենհանքերի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի արդյունաբերական և քաղաքաշինության շինարարության բաժինը, որն ավարտել է 1973 թվականին:

Այնուհետև նրա աշխատանքային գործունեությունն անցել է մի ոլորտում՝ շինարարություն: Բուհի ուղեգրով աշխատել է Կապանի քաղխորհրդի գործկոմի շինարարական վերանորոգման վարչությունում՝ աշխղեկ, որից հետո տեղափոխվել է Կապանի քաղխորհրդի գործկոմի կապիտալ շինարարության բաժին՝ գլխավոր ինժեների պաշտոնով՝ աշխատելով շուրջ 17 տարի: 91-95 թթ. աշխատել է «Քաջարանշին տրեստում»՝ գլխավոր ինժեներ: 1997-2000 թթ. Որոտան-Արփա տեղամասի վերանորոգման տեղամասի պետն էր, այնուհետև՝ քաղաքաշինական պետական տեսչությունում Կապանի պետական տեսուչն էր:

Շուրջ 13 տարի՝ 2003 թվականից, Սյունիքի մարզի քաղաքաշինական պետական տեսչության բաժնի պետն էր, որտեղից 2016 թվականին անցել էր կենսաթոշակի:

Լևոն Ներսիսյանը մարդկային հարաբերություններում շիտակ էր և ազնիվ, միշտ զգայուն էր կողքի մարդու հոգսերի հանդեպ: Այս և մյուս մարդկային արժանիքների համար նրա հիշատակն անմար կմնա բոլոր ճանաչողների սրտերում:

Մեծագույն ջանքեր է ներդրել Կապանի շինարարության և կառուցապատման գործում: Որ Կապանը շինարարության ուրույն ձեռագիր ունենա, այդ ամենում մնայուն ավանդ ունի Լևոն Ներսիսյանը: Քաղաքին ճիշտ դիտանկյունից նայելով ակնառու է դառնում Լևոն Ներսիսյանի ձեռագիրը: Միշտ ձգտում էր, որ իր բնօրրանում շինարարությունն ու կառուցապատումը ճիշտ հունով իրականացվեն: Խորապես տիրապետում էր շինարարության բոլոր նրբություններին:

Լևոն Ներսիսյանի հոգեհանգիստը տեղի կունենա Կապանի «Ֆյունիկ» սգո սրահում, հուղարկավորությունը՝ հունվարի 4-ին ժամը 12:00-ին, թաղումը՝ Անտառաշատ գյուղում:

ՀԱՄԼԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿՈՐԵԼ Է Անաստաս Հրաչիկի Բաբալարյանին պատկանող, 1986 թ. արտադրության Т-150К մակնիշի տրակտորի պետհամարանիշը՝ 6766 SL, վկայագիր N 009675: Համարել անվավեր:

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ներքոգրյալ մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար.

«Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ» առարկան /96 ժամ/ դասավանդող դասախոս:

Թափուր տեղի մրցույթին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր համապատասխանում են.

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին է ներկայացնում ներքոնշյալ փաստաթղթերը.

- Դիմում,
- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
- անձնագիր (բնօրինակը և պատճենը),
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն,
- մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
- արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը):

Փաստաթղթերն ընդունվում են քոլեջի մասնաշենքում՝ ս.թ հունվարի 10-ից մինչև հունվարի 23-ը ներառյալ, ամեն օր, ժամը 10:00-ից մինչև 16:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերի:

Մրցույթը տեղի կունենա 2024 թ. հունվարի 26-ին ժամը 14:00-ին քոլեջում:

Հասցեն՝ ք. Կապան, Շահումյան 37ա, հեռախոս՝ 0285-5-25-70, 093-777-663:

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, Ֆիզիկայի /8 ժամ/, մաթեմատիկայի /5 ժամ/, բնագիտության /4 ժամ/, բնության /4 ժամ/, կենսաբանության /8 ժամ/, աշխարհագրություն /18 ժամ/, պատմության /11 ժամ/ ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ,
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թ. հունվարի 4-ից մինչև հունվարի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հունվարի 22-ին, ժամը 10:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի թիվ 6 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Կապան Մ. Հարությունյան փ. 5-Ա:

Տեղեկությունների համար զանգահարել 077782955 կամ 028553783 հեռախոսահամարներով:

ԿՈՐԵԼ Է «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլոջ» ՊՈԱԿ-ի «Կապի սարքավորումների մոնտաժում և շահագործում» բաժնի 2014 թ. շրջանավարտ Գոհար Աշոտի Փարսադանյանի դիպլոմը՝ N 022574, գրանցման համար՝ 389: Համարել անվավեր:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ» ՏՊԱՐԱՆ ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 10.01.2024թ.: